# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի N 2291 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 134-Ա-ից թիվ 170-Ա և թիվ 171-Ն որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. Թիվ 134-Ա որոշման 3-րդ կետում համայնքի անվանումը թերի է գրառված։
2. Թիվ 136-Ա որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածը որոշմանը կից ներկայացված չէ։
3. Թիվ 137-Ա որոշման 1-ին կետում համայնքի անվանումը թերի է գրառված։
4. Թիվ 171-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չունի, ուստի համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի «Ն» (նորմատիվ) տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա, բացի այդ 4-րդ կետում կատարված հղումը անհրաժեշտ էր գրառել նախաբանում։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ.Նիկոյան

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի N 2291 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի երկրորդ նստաշրջանի առաջին նիստի թիվ, թիվ 134-Ա, 135-Ն, 136-Ա և 137-Ա որոշումների վերաբերյալ.

Թիվ 134-Ա որոշման 3-րդ կետում գրառված «Հանրապետության շիրակի մարզի արթիկի» բառեր փոխարինել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի» բառերով: 3-րդ կետում գրառված «Հանրապետության շիրակի մարզի արթիկի» բաղադրյալ հատուկ անուններում բաղադրյալ անվան միայն առաջին բաղադրիչը պետք է գրառել մեծատառով /հիմք Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2003 թվականի հունվարի 14-ի N 18-Ն հրամանով հաստատված «Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» հավելվածի 1-ին կետի «Ա» ենթակետ, 2-րդ կետի «Բ» ենթակետ/:

Թիվ 135-Ն որոշման նախաբանում հղում պետք է կատարվեր նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներին, քանի որ որոշման 2-րդ կետի 5-րդ, 6-րդ և 9-րդ ենթակետերի փոփոխություններով համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ընդհանուր գումարով 100878900 մեկ հարյուր միլիոն ութ հարյուր յոթանասունութ հազար ինը հարյուր դրամ գումար է ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

Թիվ 136-Ա որոշման 1-ին կետում գրառված «համաձայն հավելվածի:» բառերը փոխարինել «համաձայն N 2, N 4, N 5, N 6, N 7 և N 8 հավելվածների:» թվերով և բառերով:

Թիվ 136-Ա որոշման բաղկացուցիչ մաս կազմող N 2, N 4, N 5, N 6, N 7 և N 8 հավելվածները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի կողմից կնքված և ստորագրված չեն:

Թիվ 137-Ա որոշման նախաբանում հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին սխալ է կատարված: Բացի այդ որոշման նախաբանում ավագանին հղում է կատարել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 58-րդ կետին, սակայն որոշման վերնագիրը և բովանդակությունը չի համապատասխանում նշված դրույթի պահանջին:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 58-րդ կետի՝ այն է՝ եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա համայնքների կարիքների համար

կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համայնքի ավագանու որոշման հիման վրա:

Նշված դրույթը վերաբերվում է մինչև պայմանագրի կնքումը գնման ընթացակարգը ամբողջությամբ չկայացած հայտարարելուն, այլ ոչ թե գնման ընթացակարգը ամբողջությամբ չեղյալ համարելուն:

Բացի այդ «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/38/1» ծածկագրով գնման ընթացակարգը ամբողջությամբ չեղյալ համարելու վերաբերյալ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որևէ դեպք նախատեսված չէ:

Անհրաժեշտ է վերանայել թիվ 137-Ա որոշումը և այն համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության պահանջներին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի երկրորդ նստաշրջանի առաջին նիստի թիվ, թիվ 138-Ա և 171-Ն որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

10.10.2022թ.
Կատարող՝ Ա. Հարությունյան